**From:** Press [mailto:press@minagro.am]
**Sent:** 2 мая 2018 г. 16:39
**To:** Agro
**Subject:** FW: Application_MoAPC

**From:** Press [mailto:press@minagro.am]
**Sent:** Friday, April 27, 2018 9:51 AM
**To:** 'agro@minagro.am'
**Subject:** FW: Application_MoAPC

**From:** Areg Karapetyan [mailto:aregmkarapetyan@gmail.com]
**Sent:** Thursday, April 26, 2018 9:22 PM
**To:** press@minagro.am
**Subject:** Application_MoAPC

Հարգելի գործընկերներ,

Ի պատասխան Ձեր հայտարարության, դիմում եմ ընդգրկվելու ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:
Կից պահանջվող փաստաթղթերը:

Հարգանքով՝

Ա. Կարապետյան

ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
«03» 05 2018 թ.
Մուտք No Ա/6199-18

ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Իգնատի Առաքելյանին

Կ.գ.թ. Արեգ Կարապետյանից

Բնակվող՝ ք.Երևան, Այգեստանի 9-րդ փ. 67/24 հասցեում
էլ. փոստի հասցե՝ aregmkarapetyan@gmail.com

# ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Առաքելյան,

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Ամփոփ տեղեկանք վերջին 2 տարում ծավալած գործունեության մասին (1էջ),
2. Հետաքրքվածության նամակ (1էջ),
3. Անձնագրի պատճենը:

Դիմող՝

Ա.Կարապետյան

«26» մայիսի 2018 թ.

**Ամփոփ տեղեկանք 2016-2018թթ ծավալած գործունեության մասին**

**/Կ.գ.թ. Ա.Կարապետյան/**

Որպես հիմնական մասնագիտական ոլորտ կարող եմ նշել կենսաբազմազանության, լանդշաֆտների պահպանությունը և անտառաբուծությունը փոխկապացված համայքային զարգացման հետ:

Միանշանակ կարելի է ասել, որ ժամանակակից գյուղատնտեսությունը գերազանցապես հիմնված է տեխնոլոգիաների վրա, այդուհանդերձ կարևոր պայման է նաև բնական միջավայրի պահպանումը և բնական ռեսուրսների կայուն օգտագործումը: Սա է այն հիմնական շրջանակները, որ ներկայումս փորձում եմ ինքս յուրացնել, ինչպես նաև Հայաստանում քարոզել որպես կայուն զարգացման ուղի:

Վերջին երկու տարիների ընթացքում կատարել եմ հետևյալ աշխատանքները՝

- Անտառվերականգնման աշխատանքների համակարգող: Պատվիրատու՝ ՍՈԼՅՈՒՏՈՆ ՍՊԸ:
- Ծրագրի կառավարիչ, փորձագետ: Ագրոանտառաբուծության ժամանակակից հնարավորությունների ուսումնասիրում ՀՀ Արարատի մարզի արիդային պայմաններում: Պատվիրատու՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ:
- ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքում պտղատու այգու հիմնման պայմանների նախնական ուսումնասիրություն և բիզնես պլանի նախագծի կազմման փորձագետ: Պատվիրատու՝ մասնավոր ներդրող:

Մասնակցել եմ հետևյալ միջազգային հավաքների՝

- «Անտառային էկոհամակարգերի վերականգնում, ագրոանտառաբուծություն» միջազգային սեմինար: ԱՄՆ, 2016թ.:
- «ԱՆԼԵՇ ԼԱԲ 2017» տասնօրյա հավաք ուղված Կայուն զարգացման նպատակների իրագործմանը տեղական մակարդակում: Դանիա, 2017թ.:
- ՄԱԿ-ի Անապատացման դեմ կոնվենցիայի 13-րդ համաժողով: Չինաստան, 2017թ.:

**Հետաքրքրվածության նամակ**

**/Կ.գ.թ. Ա.Կարապետյան/**

Բարձր եմ գնահատում բոլոր այն աշխատավորների դերը, որոնք ջանք չեն խնայում սուղ պայմաններում ստեղծել արտադրանք ու  լինել պիտանի շրջապատին: Խոսքս առաջին հերթին գյուղատնտեսությամբ զբաղվողների մասին է, որոնց գործունեությունը ցավոք մեր օրերում չի համարվում բավարար պատվաբեր:

Որպես ՍՈԼՅՈՒՏՈՆ խորհրդատվական ընկերության հիմնադիր ու տնօրեն ինքս գործունեություն եմ ծավալում բնական ռեսուրսների կառավարման ու համայնքային զարգացման ոլորտներում: Սա Հայաստանում առաջին փորձն է կիրառել ու տարածել գիտահեն լուծումներ գործարարների լայն շրջանում: Կազմակերպության նպատակներից է նպաստել գյուղատնտեսության կայացմանը որպես լիարժեք եկամտաբեր ճյուղ, որը միևնույն ժամանակ սոցիալական ձեռներեցության լավագույն հնարավորությունն է:

Սույնով պատրաստակամությունս եմ հայտնում  անդամությանը ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդին՝ նպաստելու գյուղատնտեսության ոլորտում թափանցիկության բարձրացմանը ու հանրային մասնակցությանը որոշումների կայացման գործընթացին: